



Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ
 Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիր
 ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամ

**«Երիտասարդ գիտնականների հետազոտությունների աջակցության
 ծրագիր -2013»**

Ծրագրի պայմանների հայերեն համառոտագրություն

1. Հիմնական պայմանները

| | |
|---------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Մրցույթի սկիզբը | Դեկտեմբերի 12, 2012 |
| Հայտի ներկայացման վերջնաժամկետը | Փետրվարի 21, 2013 Ժամը՝ 16:00 (Երևանի ժամանակով) |
| Հայտի պատրաստման սեմինար | Հունվարի 26, 2013 Ժամը՝ 16:00 (ԳԱՏԱՀ-ի գրասենյակ) |
| Ինչպես դիմել | Խնդրում ենք հայտերը ներկայացնել CRDF Global-ին՝ armenia@crdfglobal.org , ԳԱՏԱՀ-ին՝ yssp-13@nfsat.am , և ԵԳԱԾ-ին՝ egac2012@gmail.com |
| Ոլորտը. | Հիմնարար կամ կիրառական գիտություններ |
| Մասնակցության իրավունք ունեն | Երիտասարդ գիտաշխատողներ (որոնց տարիքը չի գերազանցում 35 տարին, ունեն գիտության թեկնածուի աստիճան), աշխատում են ՀՀ գիտահետազոտական կազմակերպություններում և հանդիսանում են ՀՀ քաղաքացիներ |
| Շնորհի գումարը | Մինչև 7,000 ԱՄՆ դոլար |
| Շնորհի տևողությունը | 18 ամիս, այդ թվում՝ հաշվետու ժամանակաշրջանը: |

2. Ներածություն

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը՝ **ԳԱՏԱՀ**, Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը՝ **ԵԳԱԾ**, Հայաստանի երիտասարդական հիմնադրամը՝ **ՀԵՀ** և ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամը՝ **ՔՀՄՀ ԳԼՈԲԱԼ**, «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013» (ԵԳՀԱԾ) շրջանակներում հայտարարում է դրամաշնորհների մրցույթ ճշգրիտ, բնական և տեխնիկական գիտությունների բնագավառներում: Ծրագրի նպատակն է աջակցել երիտասարդ գիտնականներին կիրառական և հիմնարար գիտությունների ոլորտում բացառիկ նախագծերի իրականացման համար:

ՔՀՄՀ Գլոբալ-ը ոչ առևտրային կազմակերպություն է, որը կոչված է աջակցելու ԱՄՆ-ի և ԱՊՀ երկրների գիտնականների և ճարտարագետների համատեղ հետազոտություններին: ԱՄՆ ՔՀՄՀ-ի նպատակն է ֆինանսավորել քաղաքացիական հիմնարար և կիրառական հետազոտությունները ԱՊՀ երկրներում, ինչպես նաև նպաստել ռազմական ոլորտի նախկին մասնագետների փոխարկմանը և տարածաշրջանի շուկայական տնտեսությունների զարգացմանը: ԱՄՆ ՔՀՄՀ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերը պետք է ուղղված լինեն քաղաքացիական նպատակների իրագործմանը և իրականացվեն քաղաքացիական միջավայրում:

ԱՄՆ ՔՀՄՀ-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ կայքը՝ <http://www.crdglobal.org> :

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ) անկախ, ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1997թ-ին՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

ԳԱՏԱՀ-ի նպատակներն են.

- ◆ Նպաստել գիտության տարբեր բնագավառներում միջազգային չափանիշներին համապատասխանող հետազոտությունների և տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպես նաև զարգացնել Հայաստանի Հանրապետության գիտական և ճարտարագիտական ներուժը:

- ◆ Մրցութային հիմունքներով անմիջական աջակցություն (դրամաշնորհներ) տրամադրել գիտահետազոտական նախագծերին:

ԳԱՏԱՀ-ի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել հետևյալ կայքը՝ <http://www.nfsat.am> :

Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը (ԵԳԱԾ)

ՀՀ նախագահի հովանու ներքո իրականացվող ծրագիր է, որն ուղղված է գիտական գործունեությամբ զբաղվող մինչև 35 տարեկան երիտասարդների գիտական գործունեության աջակցությանը: Մույն ծրագրի ֆինանսավորումը իրականացվում է Հայաստանի Երիտասարդական Հիմնադրամի միջոցով:

Ծրագրի նպատակն է.

ա) աջակցել երիտասարդ հետազոտողներին կիրառական և հիմնարար գիտությունների ոլորտում բարձր մակարդակի գիտական աշխատանքներ իրականացնելուն

բ) նպաստել համաշխարհային գիտական հանրությանը երիտասարդ հետազոտողների ինտեգրմանը:

Բոլոր աջակցությունները հիմնվելու են նախագծերի գիտական անկախ փորձաքննության գնահատականների վրա և բացառապես պայմանավորված կլինեն մրցույթին ներկայացված հայտի գիտական արժանիքներով: ԳԱՏԱՀ-ի և ՔՀՄՀ Գլոբալ-ի բոլոր որոշումներ վերջնական են:

3. Մրցույթի ժամանակացույց

| | Սկիզբ | Վերջ |
|-------------------------|---------------------------------|-------------|
| Հայտի վերջնաժամկետ | Փետրվարի 21, 2013 | |
| Հայտերի փորձաքննություն | Մարտ, 2013 | Ապրիլ, 2013 |
| Արդյունքներ | Ապրիլ 30, 2013 | |
| Շնորհի սկիզբ | Մայիս 15, 2013 | |
| Իրականացում | Մայիս 15, 2013 – Մայիս 15, 2014 | |

4. Ծրագրի ուղեցույց

Ա) Ընդհանուր. Ծրագրով նախատեսվում է ֆինանսավորել անհատական և խմբակային հայտեր: Խմբակային հայտերը կարող են ներառել մինչև 3 մասնակից: Առաջարկվող շնորհի առավելագույն ընդհանուր գումարը կազմում է 7,000 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր շնորհառուի (կամ խմբի) համար և կարող է օգտագործվել 1 տարվա ընթացքում: ԳԱՏԱՀ-ը, ՔՀՄՀ Գլոբալ-ը և ԵԳԱԾ-ը խրախուսում են դիմորդներին շնորհի ընթացքում մասնակցել միջազգային գիտական կոնֆերանսների:

Բ) Մասնակցության իրավունք.

- Յուրաքանչյուր դիմորդ պետք է հանդիսանա ՀՀ գիտական կազմակերպության գիտաշխատող:
- Բոլոր նախագծերը պետք է ունենան քաղաքացիական բնույթ, չհետապնդեն ռազմական նպատակներ և իրականացվեն քաղաքացիական հետազոտությունների պայմաններում:
- Հայտերը կարող են լինել անհատական կամ խմբակային: Խմբակային հայտերը կարող են ներառել 2-3 գիտաշխատող կամ ուսանող, ներառյալ դիմորդին:

4. Յուրաքանչյուր դիմորդ պետք է լինի բնական կամ տեխնիկական գիտությունների թեկնածու:
 5. Դիմորդը և խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան ՀՀ քաղաքացի կամ ՀՀ մշտական բնակիչ, ինչպես նաև դրամաշնորհի ընթացքում պետք է բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:
1. ԳՄՍՄՀ-ի աշխատակիցները, ներառյալ հոգաբարձուների և գիտական խորհրդի անդամներն ու խորհրդատուները, իրավունք չունեն հայտ ներկայացնելու: Բացի դրանից, հայտ ներկայացնելու իրավունք չունեն նաև ԳՄՍՄՀ-ի աշխատակիցների, ներառյալ հոգաբարձուների և գիտական խորհրդի անդամների ու խորհրդատուների, ընտանիքների անդամները:
 2. Սույն ծրագրի շրջանակներում որևէ անհատ չի կարող հանդիսանալ մեկ հայտի ղեկավար և միաժամանակ հանդիսանալ ԳՄՍՄՀ -ի կողմից ընթացիկ ֆինանսավորվող գիտական ծրագրերից որևէ մեկ այլ խմբի անդամ (ղեկավար):
 3. Նախագծերը կարող են լինել ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական գիտությունների և ճարտարագիտական բնագավառներից՝ ներառյալ տեխնոլոգիական մշակումները, որոնք առևտրային նշանակության ակնկալիքով նորարարական գործընթացի մաս են հանդիսանում:
 4. Յուրաքանչյուր հայտ գնահատվելու է առանձին և անկախ, հետևաբար այն չպետք է կազմի սույն ծրագրի շրջանակներում ներկայացվող այլ հայտերի մաս կամ որևէ կերպ կախված լինի դրանցից:
 5. Յուրաքանչյուր հայտ պետք է ներառի հաստատման և երաշխավորման առանձին նամակներ, որոնք պետք է ստորագրված լինեն հետևյալ անձանց կողմից.

ա) Հավաստման տեղեկանք Գլխավոր հետազոտողի կողմից առ այն, որ հնարավոր շնորհի ընթացքում ինքը չի ստնալու որևէ եկամուտ այլ կազմակերպությունից:

բ) Երաշխավորագիր աշխատանքի վայրից, որը հաստատում է, որ կազմակերպությունը աջակցում է ներկայացված հետազոտական նախագծին, առանց որևէ ֆինանսական աջակցության:

Գ) Ֆինանսավորման նախապատվություն.

1. գիտական խնդիրների լուծման նոր հետազոտական մեթոդներ և հատկապես այնպիսիք, որոնք նորություն են ՀՀ համար,
2. հետազոտական թեմաներ, որոնք նպատակ են հետապնդում լուծելու ՀՀ համար արդիական գիտատեխնիկական խնդիրներ կամ զարգացնելու ՀՀ քաղաքացիական բնույթի հետազոտությունների միջավայրը,
3. հետազոտական թեմաներ, որոնք մեծ հավանականություն ունեն հրատարակվելու միջազգային առաջատար գիտական ամսագրերում և ներկայացվելու միջազգային գիտաժողովներում և գիտական հանդիպումների ժամանակ,
4. կին դիմորդներ,
5. դիմորդներ Երևանից դուրս տեղաբաշխված ստորաբաժանումներից,

6. դիմորդներ, որոնք մինչև դիմումի ներկայացումը դրամաշնորհի չեն արժանացել ԳԱՏԱՀ-ի, ԱՄՆ ՔՀՄՀ-ի կամ ֆինանսավորում տրամադրող որևէ այլ միջազգային կազմակերպության կողմից:

5. Հայտի ներկայացման ցուցումներ

ԵԳԱԾ և **ՔՀՄՀ Գլոբալ**. Բոլոր հայտերի էլեկտրոնային տարբերակները ԵԳԱԾ-ին և ՔՀՄՀ Գլոբալ-ին պետք է հանձնել նաև էլ. փոստով.

Դիմորդի էլեկտրոնային փաթեթը պետք է ներառի.

1. Հայերեն լեզվով մեկ էլեկտրոնային տարբերակ egac2012@gmail.com, և Անգլերեն լեզվով մեկ էլեկտրոնային տարբերակ՝ armenia@crdfglobal.org
2. Հայտի էլեկտրոնային տարբերակը պետք է ներկայացնել որպես **մեկ** էլեկտրոնային ֆայլ՝ «Microsoft Word» կամ «PDF» ձևաչափի:
3. «.zip» ձևաչափով ներկայացված հայտերը, որոնք պարունակում են մի քանի փաստաթուղթ, չեն ընդունվի:
4. Բոլոր հայտերը պետք է տպվեն 1.5 տողամեջ հեռավորությամբ, տառերի 12-րդ չափսով («Sylfaen» հայերենի և «Times New Roman» անգլերենի համար), 2.5 սմ լուսանցքով ինչպես կողքերից, այնպես էլ էջի վերևից և ներքևից, իսկ բոլոր էջերը՝ ներառյալ «Ձևերը», պետք է հաջորդաբար համարակալվեն վերևի աջ անկյունում:

Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել՝

ՔՀՄՀ Գլոբալ

Մեազա Դեմիսի

Ծրագրի համակարգող

Էլ. փոստ՝ Armenia@crdfglobal.org

ԳԱՏԱՀ. Բոլոր դիմորդները պետք են հանձնեն իրենց հայտերը ԳԱՏԱՀ-ի գրասենյակ:

Դիմորդի փաթեթը պետք է ներառի.

1. Հայերեն լեզվով մեկ բնօրինակ թղթի վրա և մեկ էլեկտրոնային տարբերակ:
2. Անգլերեն լեզվով մեկ բնօրինակ թղթի վրա և մեկ էլեկտրոնային տարբերակ:
3. Ռուսերեն լեզվով հայտի սեղմագիրը
4. Դիմորդը հայտի բնօրինակի հետ պետք է ներկայացնի իր հաստատման և երաշխավորման նամակների բնօրինակները:
5. Հայտի էլեկտրոնային տարբերակները պետք է ներկայացվեն 2 ֆորմատով՝ մեկ «Microsoft Word»-ի և մեկ «PDF»-ի ֆայլ:
6. «.zip» ձևաչափով ներկայացված հայտերը, որոնք պարունակում են մի քանի փաստաթուղթ, չեն ընդունվի:
7. Բոլոր հայտերը պետք է տպվեն 1.5 տողամեջ հեռավորությամբ, տառերի 12-րդ չափսով («Sylfaen» հայերենի և «Times New Roman» անգլերենի

համար), 2.5 սմ լուսանցքով ինչպես կողքերից, այնպես էլ էջի վերևից
և ներքևից, իսկ բոլոր էջերը՝ ներառյալ «Ձևերը», պետք է հաջորդաբար
համարակալվեն վերևի աջ անկյունում:

ԳՍՏԱՀ

Հասցե՝ Ազատության պող. 26, Երևան-0014, ՀՀ

Հեռ.՝ (374-10)-28-81-92

Էլ. փոստ՝ yssp-13@nfsat.am

Հարցերի դեպքում խնդրում ենք դիմել՝

ԳՍՏԱՀ

Ալեքսանդր Խաչունց

Գործադիր տնօրենի տեղակալ

Ծրագրի համակարգող

Հեռ.՝ (374-10)-28-81-92

Էլ. փոստ՝ khas@nfsat.am

Յուրաքանչյուր հայտ պետք է ներառի ստորև նշված բոլոր բաղադրիչները:
(Մանրամասների համար տես *Application Instructions* անգլերեն տարբերակում)

1. Տիտղոսաթերթ (Form A).
2. Ամփոփագիր
3. Ծրագրի նկարագրություն
4. Երաշխավորման նամակ կազմակերպությունից
5. Գլխավոր հետազոտողի հաստատման տեղեկանք
6. Բյուջե (Form B).
7. Բյուջեի մեկնաբանում

6. Գնահատման չափանիշները

1. Նախագծի գիտական արժանիքները.

-Հավանականությունը, որ նախագծի իրականացումը կարող է բերել նոր
գիտելիքների կամ նորարարական առաջարկությունների, որոնք էական
նշանակություն կունենան գիտական և ճարտարագիտական մեկ կամ մի
քանի բնագավառների համար:

-Հավանականությունը, որ նախատեսված հետազոտությունը շահավետ
կլինի ընդհանրապես հանրությանը և, մասնավորապես, Հայաստանի
Հանրապետությանը, ինչպես նաև՝ նման շահավետության բնույթը:

2. Անձնակազմի կարողությունները.

-Դիմորդի և (անհրաժեշտության դեպքում) հայտի մյուս մասնակիցների
կարողությունը ներկայացված հետազոտության իրագործման հարցում:

-Հետազոտողների ունակությունները, ինչպես նաև առաջարկվող նախագծի գիտական արժանիքները:

-Նախագծի իրականացման համար բոլոր մասնակիցների կողմից նախատեսվող տեխնիկական միջոցների և հնարավորությունների համապատասխանությունը նախագծի իրականացմանը:

3. Հետազոտության պլանավորումը.

-Առաջադրվող մոտեցման իրագործելիությունը,

-նախագծի նպատակների պարզությունն ու ռացիոնալությունը,

-աշխատանքն իրագործելու համար տեխնիկական միջոցների և հնարավորությունների համապատասխանությունը նախագծի իրականացմանը:

4. Մասնագիտական համապատասխանությունը.

-Առաջադրված աշխատանքի համապատասխանությունը դիմորդի մասնագիտական նպատակներին, ինչպես նաև մասնագիտական բնագավառին ու հետաքրքրություններին:

-Առաջադրված աշխատանքի ներուժը՝ դիմորդի մասնագիտական նպատակները և զարգացումը հեշտացնելու հարցում:

-Հավանականությունը, որ աշխատանքն ուղի կհարթի համատեղ աշխատանքների, հետագա հաջող ֆինանսավորման, թեկնածուական հաջող պաշտպանության, ինչպես նաև միջազգային գրախոսվող ամսագրերում հոդվածների հրապարակման համար:

7. Հատուկ ցուցումներ

Որոշիչ է մրցույթի պայմանների անգլերեն տարբերակը, քանի որ հայերեն տարբերակը միայն համառոտագրություն է: